Ուրբաթ, 20 օգոստոսի, 2010թ.

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Ս. Տեր Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 13 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնի գյուղի դպրոցի և համայնքային կենտրոնի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ և Այգեհովիտ գյուղերում ագրոտեխնիկական բազաների կառուցում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Նորագյուղ գյուղի ջրամատակարարման ներքին ցանցի վերակառուցման հեղինակային հսկողություն» ծրագրերը:

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքի թիվ 1 մանկապարտեզի հիմնանորոգում» ծրագիրը:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Մ.Ավետիսյանի անվան պուրակի խաղահրապարակի խաղասարքերի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բաղաբերդ և Երկաթուղայիններ թաղամասում խաղահրապարակների և Ագարակ գյուղում հուշահամալիրի բարեկարգում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի քաղաքային այգում խաղահրապարակի տեղադրում» և «Ամառային ճամբարի անցկացում» ծրագրերը:

«Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը, որի նպատակն է հայկական պատմամշակութային արժեքների պահպանումը և վերականգնումը:

«Շիրակ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գոգհովիտ համայնքի մշակույթի տան հիմնանորոգում» ծրագիրը:

«Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքային մաքուր խմելու ջրամատակարարում» ծրագիրը:

Նիստում քննարկվել եւ հաստատվել են նաեւ նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ եւ տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: